„ ձեր գալոց են. որպէս զի և յետ
„ ձերոյ վախճանին գտանիցեն ա-
„ նուամն ձերոյ օրհներգուք: Նա և
„ թէ ոչ նոր ինչ յաւելջիք յառաջ-
„ նոցն վաստակս, գոնեայ անդարտողք
„ նոցին մի լինիջիք, այլ մանաւանդ
„ պահպանողք և գովիչք ևս երախ-
„ տեացն. զի զբարեաց անջինջ օրէն
„ է՝ զոր և ընդունիցի ոք՝ պահել 'ի
„ սրտի գյիշատակս: Ահա և այդմ
„ տարացոյց ձեզ կաղնիքդ հնգեքին
„ որ շուրջ պատեն զմեծաւս այսու,
„ և 'ի վերայ միոյ միոյ 'ի նոցանէ տե-
„ սանէք 'ի վերոյ քան զարմն տաշեալ
„ և զանուանս բարեացապարտ նա-
„ խահարցն իմոց դրոշմեալ յորդւոց
„ անտի շնորհակալուաց „:

Լռեաց Արբուն, և լռութեամբ մեկնեցան ամենեքին՝ որոճալով 'ի մտի զբանսն նորա. և 'ի միւսանգամ խմբել նոցա անդանօր՝ զաչս 'ի վեր առեալ ծերոյն ետես, և ոչ առանց գեղեցիկ շառագնութեան, 'ի կաղնւոջ միում որ 'ի մնարս իւր դրոշմեալ զիւր անուն, և պսակս ծաղկանց զօստոցն զնովաւ կախեալ. զի ինքն իսկ Արբուն լեալ էր հեղինակ անդաստանին որ առ հովուավանօքն 'ի զբօսանս պիտոյից բնակելոցն: Եւ ընդ աչալրջութիւն հովուացն խնդամտեալ օրհնեաց զնոսա և ասէ. "Երախտագիտութիւն,
„ որդեակք իմ, զամենայն ինչ մեծ և
„ կենդանի առնէ. և բազում այն է
„ զի ազնուականութիւն շնորհակա-
„ լու սրտից՝ պայծառագոյն ընծայե-
„ ցուցանէ զերախտաւորին յիշատակ,
„ և ոչ ինչ ընդհատ 'ի նմանէ փառս
„ յանմահէն ընկալցի և գովութիւն
„ 'ի մարդկանէ „:

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Հակակրութիւն:

ԲՆԱԿԱՆ հակակրութիւններ կան որ շատ զարմանալի են, ու պատճառները չեն գիտցուիր: Մարդիկ եղած են որ վարդի հոտէն կը մարին եղեր, թէպէտ և ուրիշ ծաղկըներու հոտը կ'ախորժէին: Քաղաքապետին մէկը ձկան հաւկիթ տեսնելուն պէս՝ ձեռքը ոտքը դող կ'ելլէր կ'ըսեն: Նոյնպէս կին մը կայ եղեր որ եփած խեչափար մը տեսնել չկրնար եղեր:

Երազմոս անունով հռչակաւոր կարդացողը, որ Ռոթթերտամ քաղաքը ծնած էր, այնպէս կը զզուէր ձուկէ՝ որ ձկան հոտէն ալ վրան ջերմի պէս դող կ'իյնար: Նոյն բանը կը պատմեն նաև ուրիշի մը վրայ, որ ամենևին օձաձուկ չկրնար եղեր տեսնել:

Յովսէփ Սքալիճէր ոչ երբէք կաթ կերեր է: Քարտամ հեղինակը հաւկիթ չկրնար եղեր ուտել. Ստանիսլաւ Նակելլոն Լեհիթագաւորը՝ խնձորէն կը գանի եղեր: Տիւշէն անունով իշխանի մըն ալ խնձոր հոտուըտացընելուդ պէս՝ քթէն սաստիկ արիւն կուգայ եղեր: Հենրիկոս Գ Գաղղիոյ թագաւորը կատու եղած բնակարանի մէջ չէր կրնար կենալ կ'ըսեն: Ինսափրուք քաղաքը երևելի իշխանաւոր մը կայ եղեր ատենով, որ կատուի ձայնը հեռուէն ալ լսելով՝ մէկէն արիւն կուգար քթէն կ'ըսեն:—Մարդուն մէկը այնչափ կը գանի եղեր ոզնիէն որ մէկ անգամ ոզնի մը տեսած ըլլալով՝ երկու տարիի չափ իրեն այնպէս կ'երևնայ եղեր թէ փորուն մէջ ոզնի կայ ու աղիքները կը կրծէ: Ասոր նման կտրիճ մարդ մը կայ եղեր որ մուկէն սաստիկ կը վախնայ եղեր:—Խրիւսիպպոս փիլիսոփան բարևտուքէ այնչափ կը գանի եղեր որ մէկը իրեն բարև տալուն պէս՝ կ'իյնայ կը մարի եղեր: Աւելի ծիծաղականն աս է որ կ'ըսեն թէ Տոն Խուան Ռոլանունով սպանիացի իշխանը lana այսինքն բուրդ բառը լսելուն պէս կը մարի եղեր, թէպէտ և իր հագածն ալ բրդեղէն էր: